



The Holy See

MESSAGGIO DEL SANTO PADRE FRANCESCO AGLI ARMENI

Սիրելի Հայ եղբայրներ եւ քույրեր,

Մէկ դար անցած է արդէն այն սահմակեցուցիչ ջարդէն՝ որ ձեր ժողովուրդին համար իսկական մարտիրոսութիւն մը եղաւ, որու ընթացքին շատ անմեղներ մեռան որպէս Քրիստոսի անուան խոստովանողներ ու մարտիրոսներ (հմմտ. Յովհաննէս Պօղոս Բ. եւ Գրեգորիոս Բ., *Հասարակաց Յայտարարութիւն*, Էջմիածին, 27 Սեպտեմբեր 2001): Այսօր չկայ հայ ընտանիք մը, որ այդ դէպքերու ընթացքին կորսնցուցած չլլայ իր սիրելիներէն մէկը. այդ եղաւ իսկապէս «Մեծ Եղեռն»ը, ինչպէս դուք կոչած էք այդ ողբերգութիւնը: Այս ատրիւ ուժեղ մերձաւորութեան զգացում մը կ'ապրին զգամ ձեր ժողովուրդին հանդէպ ու կը փափաքին հոգեպէս միանալ աղօթքներուն՝ որ կը բարձրանան ձեր սրտերէն, ձեր ընտանիքներէն, ձեր հասարակութիւններէն:

Միանաբար աղօթելու բարեպատեհ առիթ մը կ'ընծայէ մեզի այսօրուան արարողութիւնը, որու ընթացքին Եկեղեցւոյ Վարդապետ կը հռչակենք սուրբ Գրիգոր Նարեկացին: Ձերմ երախտագիտութիւն կը յայտնեն իրենց ներկայութեան համար՝ Ն.Ս.Օ. Գրեգորիոս Բ.ին, Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ն.Ս.Օ. Արամ Ա.ին, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, եւ Ն.Ա.Տ. Ներսէս Պետրոս ԺԹ.ին, Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց:

Սուրբ Գրիգոր Նարեկացի, Ժ. դարու միանձնը, առաւել քան ուրիշներ, գիտցաւ արտայայտել ձեր ժողովուրդին զգայնութիւնը, ձայն տալով այն աղաղակին՝ որ կը դառնայ աղօթքը տառապակոծ եւ մեղադարտ մարդկութեան մը. մարդկութիւն՝ որ թէպէտեւ ընկճուած է իր անկարութեան տագնապէն, կը լուսաւորուի սակայն Աստուծոյ սիրոյն պայծառութենէն եւ կը բացուի անոր փրկարար միջամտութեան յայսին՝ որ կարող է ամէն ինչ փոխակերպելու: «Ի՞նչն որոյ զօրութեան վստահապէս ահնայալութեամբ վերագրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկմիտ յուսով հաւատամ ի կարողին ձեռն ապաստանեալ ... գնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն եւ ի գրութիւն եւ յերկնիցն ժառանգութիւն» (Նարեկ, ԺԲ.):

Ձեր քրիստոնէական կոչումը շատ հին է եւ մինչեւ 301 թուականը կը հասնի, երբ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ դէպի դարձ եւ մկրտութիւն առաջնորդեց Հայաստան աշխարհը, որ դարերու ընթացքին Քրիստոսի Աւետարանին փարոզ ազգերուն միջեւ առաջինը հանդիսացաւ: Այդ հոգեւոր իրադարձութիւնը իր անջնջելի կնիքը դրոշմեց Հայ ժողովուրդին, անոր մշակոյթին եւ պատմութեան վրայ, ուր նահատակութիւնը իր նախապատիւ տեղն ունի, ինչպէս նշանակալից կերպով կը

վկայէ սրբոց Վարդանանց գոհաբերական նահատակութիւնը Ե. դարուն:

Ձեր ժողովուրդը, Քրիստոսի լոյսով լուսաւորուած եւ զօրութեամբք անոր շնորհին, շատ փորձեր ու տառապանքներ յաղթահարած է (հմմտ. *Հոռմ. Ը, 31-39*): Ինչպէս ըսած է ձեզի սուրբ Յովհաննէս Պօղոս Բ.՝ «Տառապանքով եւ մարտիրոսութեամբ քրծուած ձեր պատմութիւնը քանկագին գոհար մըն է, որով հպարտ է ընդհանրական Եկեղեցին: Մարդուս փրկիչը եղող Քրիստոսի հանդէպ հաւատքը ներշնչած է ձեզի հիմնալի արիւթիւն մը, յանախ այնքան նման՝ նոյնինքն խաչի արիւթեան, որով վնասկամ յառաջացաք, ժողովուրդի եւ հաւատացեալներու ձեր ինքնութիւնը պահպանելու անկուն կամքով» (*Ճառ, 21 Նոյեմբեր 1987*):

Այս հաւատքը ընկերակցեցաւ ձեր ժողովուրդին եւ զօրավիգ եղաւ անոր՝ նաեւ հարիւր տարիներ առաջուան ողբերգական իրադարձութիւններու ընթացքին, որոնք «կը սահմանուին առ հասարակ որպէս Ի. դարու առաջին ցեղասպանութիւնը» (Յովհաննէս Պօղոս Բ. եւ Գարեգին Բ., *Հասարակաց Յայտարարութիւն, Էջմիածին, 27 Սեպտեմբեր 2001*): Բենեդիկտոս ԺԵ. Պապը, որ Առաջին Աշխարհամարտը դատապարտած է իբրեւ «անօգուտ սպանդ» (*AAS, IX [1917], 429*), ի սպառ ճիշդ չէ խնայած գայն կասեցնելու համար, վերստին ձեռք առնելով՝ 1894-96 թուականներու «մահազուշակ դէպքեր»ուն ի տես Լեւոն ԺԳ. Պապին կողմէ արդէն կատարուած միջնորդութեան փորձերը: Այս նպատակով ան գրած է Մեհմետ Ե. Սուլթանին՝ աղերսելով որ խնայուէին անհամար անմեղները (հմմտ. *Նամակ, 10 Սեպտեմբեր 1915* թուակիր) եւ ինքն է որ, 6 Դեկտեմբեր 1915-ի Կարդինալներու Դռնփակ Ժողովին, հաստատած է սառսաղարկի սոսկումով՝ «Հայոց թշուառագոյն ազգը դէպի բնաջնջում կ'առաջնորդուի» (*AAS, VII [1915], 510*):

Կատարել յիշատակը պատահածին՝ պարտականութիւն մըն է ո'չ միայն Հայ ժողովուրդին եւ ընդհանրական Եկեղեցւոյ, այլ եւ համայն մարդկային ընտանիքին համար, որպէսզի այս ողբերգութենէն եկող ազդարարութիւնը մեզ ազատէ վերստին իյնալէ նման արեւախրքներու մէջ, որոնք կ'անարգեն զԱստուած եւ մարդկային արժանապատուութիւնը: Յիրաւի, նաեւ այսօր, նման ընդհարումներ երբեմն կ'այլասերին դէպի անչմեղելի բռնութիւններ, որոնք կը սնուցուին չարաճախելով էրնիկ եւ կրօնական տարբերութիւնները: Բոլոր անոնք որոնք Ազգերու եւ միջազգային Կազմակերպութիւններու գլուխը կանգնած են՝ կոչուած են հաստատ պատասխանատուութեամբ ընդդիմանալու նման ոճիրներու, առանց երկդիմութիւններու եւ զիջումներու:

Այս կսկծալի յիշատակումը թող բոլորին համար հանդիսանայ շարժառիթ՝ խոնարհ եւ անկեղծ խորհրդածութեան, եւ բանալու սիրտերը դէպի ներդառնութիւն, որ աղբիւր է խաղաղութեան եւ վերանորոգ յոյսի: Սուրբ Գրիգոր Նարեկացի, մարդկային հոգիին այդ արտակարգ մեկնաբանը, կարծես մարգարէական խօսքեր կ'արտաբերէ մեզի համար. «Քանզի եւ ես իսկ ... վկայեալ գանձնէ կամաւորական սուգտանք բիր բամբասանաց անբժեկական մեղանաց, ի սկզբնաւորս սկսեալ մինչեւ ի կատարումն ծննդոց նորա, կամայական յանձնառութեամբ հաստեցի եղի զիս ամենայնիդ պարտական չարեաց» (*Նարեկ, ՀԲ.*): Ուրիշն է՝ ազգէ մեր վրայ համընդհանրական զօրակցութեան իր այս զգացումը: Ուրիշն փոքր կը զգանք մենք մեզ՝ անոր բացազանչութիւններուն մեծութեան առջեւ. «Յիշեալ՝ գոյ մեծութիւնդ, Տէր ... ընդ խնդրելս իմ ի քէն բարի իմոցն ատելեաց, եւ Դու առ քոյս ըստ քում մեծութեանդ անհաւելիս հրաշագործեցես: Մի՛ ստատկեցես զիմն խածանդսն, այլ փութեցես. խլեալ զխոտանս բարս երկրաւորս, զբարիսն արմատացուցես եւ յիս եւ ի նոսին» (*անդ, ԶԳ.*):

Թող շնորհէ Աստուած, որ Հայ եւ Թուրք ժողովուրդներուն միջեւ վերահաստութեան ուղին վերաբացուի եւ որ խաղաղութիւն ծագի նաեւ Ղարաբաղի մէջ: Այս ժողովուրդները, անցեալին, ի հեճուկս հակառակութիւններու եւ լարումներու, ապրած են խաղաղ համակեցութեան երկար շրջաններ եւ՝ նոյնիսկ բռնութիւններու թռուրդին մէջ՝

գորակցութեան եւ փոխադարձ օգնութեան պարագաներ տեսած են: Միայն այս ոգիով է որ նոր սերունդները կրնան բացուիլ աւելի լաւ ապագայի մը եւ շատերու գոհաբերումը կրնայ սերմը դառնալ արդարութեան եւ խաղաղութեան:

Մեզի բրիստոնեաներուս համար, այս պահը թող ըլլայ յատկապէս աղօթքի գորաւոր պահ մը, որպէսզի թափուած արիւնը, Քրիստոսի գոհին փրկարար զօրութեամբ՝ ներգործէ լրիւ միութեան հրաշքը անոր աշակերտներուն միջեւ: Յատկապէս, վերամրացնէ եղբայրական բարեկամութեան կապերը, որ արդէն իսկ կը զօդեն Կաթողիկէ Եկեղեցին եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին: Բազմաժամար եղբայրներու եւ քույրերու վկայութիւնը, որոնք՝ անգէն՝ իրենց կեանքը գոհեցին իրենց հաւատքին համար, իրարու հաղորդակից կը դարձնէ տարբեր յարանուանութիւնները. արեան համամիութիւնն է այս, որ մղեց սուրբ Յովհաննէս Պօղոս Բ.ը, 2000 թուականի Յոբելէանին առթիւ, միասնաբար տօնելու Ի. դարու բոլոր նահատակները: Այսօրուան արարողութիւնն ալ կը զետեղուի հոգեւոր եւ եկեղեցական այս համագրին մէջ: Անոր կը մասնակցին մեր երկու Եկեղեցիներուն ներկայացուցիչները, եւ հոգեւին կը միանան անոր աշխարհի վրայ սփռուած բազում հաւատացեալներ, այսպէս երկրի վրայ հայեւացնելով այն կատարեալ հաղորդութիւնը, որ կը տիրէ երկնքի երանեալ հոգիներուն միջեւ: Եղբայրական ոգիով կը վստահեցնեն իմ մերձաւորութիւնս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ նահատակներու սրբադասման արարողութեան առթիւ, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ապրիլի 23-ին Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, եւ ոգեկոչման արարողութիւններուն, որ պիտի կատարուին Յուլիսին, Անթիլիասի մէջ:

Աստուածամօր կը յանձնեն այս դիտաւորութիւնները սուրբ Գրիգոր Նարեկացիի խօսքերով.

«Մաքրութիւն կուսից եւ սկզբնաշաւիդ դասուց երջանկաց,
մայր հիմնադրութեան հաստատութեան Եկեղեցւոյ,
եւ ծնող անարատ Բանին Աստուծոյ:

...

Եւ ի թեւս պահպանութեան լայնատարած բունդ մաղթանաց ապաւինելով,
գձեռս մեր ի սմա տարածենք,
եւ աներկբայ յուսով հաւատամք ապրիլ»:

(*Ներբող Սրբոյ Աստուածածնին՝ «Գումարք խմբից»*)

Վատիկանէն, 12 Ապրիլ 2015

FRANCISCUS